

ՖԻՐԻՈՒՍՈՒ ՀԱՅ ԹԱՐԻՄԱՆԻՉՆԵՐԸ

ԱՐՓԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Իրանական վիպական դրույցների և Ռոստամի մասին առաջին տեղեկություններին հանդիպում ենք պատմահայր Մ. Խորենացու մոտ¹։ V դ. ոչ միայն Մ. Խորենացին, այլև Սահակ Բագրատունին ծանոթ են եղել պարսից առասպելներին², նշենք, որ դրանց ամենահին գրառումները վերաբերում են VI դ. Հետագայում, X դ., այդ դրույցները մշակվելով դառնում են նախ 'Իադիդիի, ապա Ֆիրդուսու «Շահնամե» էպիկական խոշոր ստեղծագործության ատաղձը։

X—XI դդ. Գրիգոր Մազիստրոսի թղթերում կան հետաքրքիր տեղեկություններ Ռոստամի, Սպանդիարի, Աժդահակի մասին³։ Ավելի ուշ՝ XIII դ., Կոստանդին Նրզնկացին գրում է ոտանավոր «Շահնամեի» շափով⁴։ Հետագայում, իրանական էպոսի հերոսներից մեկի՝ Ռոստամի, անվանը հանդիպում ենք Սայաթ-Նովայի երգերում։

Ինչպես իրանական էպոսի բանավոր պատումները, այնպես էլ «Շահնամեի» գրավոր մշակման լայն ծանոթությունը հետագայում հիմք հանդիսացան գիտական ուսումնասիրությունների և թարգմանությունների համար։

Ֆիրդուսու «Շահնամեի» առաջին գիտական ուսումնասիրությունը կատարել է Ստեփանոս Նազարյանը։ Կազանում աշխատելու տարիներին նա, հայագիտական հետազոտություններին դուգահեռ, ուսումնասիրում է պարսկերեն և արաբերեն լեզուները, խորամուխ է լինում պարսկական պոեզիայի մեջ, թարգմանում է Սաադիի «Գուլեսթանը» և գրում մի հետազոտություն Ֆիրդուսու «Շահնամեի» մասին (ոուսերեն լեզվով), որը 1849 թ. պաշտպանում է իբրև դոկտորական դիսերտացիա։ Աշխատության առաջին մասը հրատարակվել է 1849 թ. Կազանում, իսկ երկրորդ մասը՝ 1851 թ. Մոսկվայում⁵։

Ֆիրդուսու «Շահնամեից» կատարած հայերեն առաջին թարգմանության պատիվը պատկանում է Սամուել Գյուլզադյանցին, որը հրատարակել է «Ռուստամ և Սոհրաբ» վեպը⁶ և տասը դանազան հատվածներ։ Գրքում ղևտեղված են նաև հետևյալ բանաստեղծությունները՝ Ֆիրդուսու գրած պատասխանը Մահմուդ շահի դպրապետին, նրա արքունական բանաստեղծներին՝ Անսարիին,

1 «Մոզսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», Մատուցիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 114—115։

2 Նույն տեղում, էջ 114։

3 «Գրիգոր Մազիստրոսի թղթեր», Աղեքսանդրապոլ, 1910, էջ 66։

4 «Կոստանդին Նրզնկացի, ԺԳ դարու ժողովրդական բանաստեղծ և յուր ջերթվածները», Վենետիկ, 1905, էջ 128։

5 Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1959, էջ 20։

6 Ռ. Նանուժյան, Ստեփանոս Նազարյան, Նամականի, Երևան, 1969, էջ 541—542։

7 Ֆիրդուսի, Ռուստամ և Սոհրաբ, ամբողջական վեպ և զանազան հատվածներ «Շահնամայից», թարգմանեց Բնադիր պարսկերենից Սամուել Գյուլզադյանց, Շուշի, 1893, էջ 150։

Տարրութիւն, Ասլեղին, Ֆիրդուսու հանպատրաստից քառատողը և նույն շահին ուղղված մի ոտանավորը: Վերջում տրված է «Ռուստամ և Սոհրաբ» վեպը, բաղկացած 23 գլուխներից: Մանթազրության մեջ թարգմանիչը տեղեկացնում է, որ ձեռքի տակ ունեցել է «Շահնամի» չորս տարբերակ, որոնցից մեկը հրատարակված է 17 տարբեր ձևագրերի ներսում համեմատելուց հետո: Ս. Գյուլզադյանցը հիմք է ընդունել հինգ այդ տարբերակը: Գիրքը թարգմանված է չափածո՝ 4—4—4—3 չափով:

Ս. Գյուլզադյանցի «Շահնամից» կատարած երկրորդ թարգմանությունը «Սիավուշ» վեպն է: Այն արձակ թարգմանություն է, որի մասին Ս. Գյուլզադյանցը գրում է. «Վերոհիշյալ վեպը՝ «Սիավուշ»-ը արձակ թարգմանեցիք, դարձյալ ճշտության համար՝ բնագրի իսկական բառերովը և նրա սեփական լատինատառութայիններովը, նաև դիտակցաբար առանց հապավելու, իբրև Իրանի Արա Գեղեցիկը և Շամիրամը՝ ուսումնասիրելու հետաքրքրական նյութ: Միևնույն կերպով ենթ թարգմանած այդ հատկությունն ու նշանակությունն ունեցող գրա հաջորդ «Քեյ Խոսրով» (Մեծն Կյուրոս) վեպի ա. մասն՝ իբրև Իրանի Արտաշես Մանուկը»⁸:

Երրորդ թարգմանությունը «Զոհակ Բյուրասպի Աժդահակ» վեպն է, որը հրատարակվել է Շուշիում՝ 1894 թ.: Գրքում նախ տրված է Ֆիրդուսու ընծայականը շահ Մահմուդին. ապա՝ Ֆիրդուսու առաջաբանը և «Ֆիրդուսին իր մեկնեա Մահմուդ շահին» ներբողը, այնուհետև՝ վեպը, որ բաղկացած է 11 գլխից: Գրքի վերջում գրված է, թե ինչ ձեռագիր կամ տպագիր օրինակներ է օգտագործել թարգմանիչը: Իր իսկ վկայությամբ՝ Ս. Գյուլզադյանցի թարգմանությունը կազմում է 15.000 տող (15 վանկյան ոտանավոր): Գիրքը վերջում ունի «Հատվածներ Շահնամայից» բաժինը, ուր տրված են՝ Ֆիրդուսու նախերգանքը յուր վիպադրության մասին, Ֆիրդուսու վերջաբանը «Շահնամի» ավարտման մասին և նրա պարսավեր Մահմուդ շահին:

Ժամանակագրական կարգով Ֆիրդուսու հաջորդ թարգմանիչը Հարություն Թիրյաքյանն է: Նա 1907 թ. Փարիզում՝ «Անահիտ» ամսագրի էջերում հրատարակել է Արտաշիր Բարականի կյանքն ու սխրանքը պատկերող հատվածները, որոնք հետագայում ամբողջացնելով լույս է ընծայել առանձին գրքով: Վերստին հրատարակելուց առաջ Հ. Թիրյաքյանը այն համեմատել է այլ հրատարակությունների ու թարգմանությունների հետ: Նրա կատարած թարգմանությունը երեք գրվագ է, բաղկացած՝ 1975 տողից: Իր թարգմանության մասին Հ. Թիրյաքյանը գրում է. «Նախ չափու մասին բսենք, որ մենք զմեզ բոլորովին միևնույն պայմաններու մեջ դնելու համար, ...նույն իսկ Ֆիրդուսին գործածած չափերն ընդունեցինք, 6—5, ինչպես հաճախ լսած և ստույգած ենք Նասր-էդ-դին և Մուգաֆիր-էդ-դին շահերու քաջուոր ընթերցողներն, թեև այս չափը քիչ գործածված է մեր մեջ ուր սովորականն է 5—6: Այսուամենայնիվ, միօրինակությունը խղելու համար, վերջերք՝ 4—4—3-ի փոխեցինք,

⁸ Յ. Ի. Բ. Ու. Ս. Ս. Սիավուշ, ամբողջական վեպ «Շահ-նամայից», Շուշի, 1894, էջ 6. Մանթազրության մեջ թարգմանիչը նշում է. «Այս վեպն ես շուտով լույս կընծայվի կազմելով մեք ընտրողաբար թարգմանությունների 2 գիրքը: Պատրաստ են նաև Բ. և Գ. գրքերը: Հավանաբար, վերջին երեքը՝ Բ., Գ. և Զ. հատորները, չեն հրատարակվել, քանի որ չեն պահպանվել ոչ մի գրադարանում:

⁹ Մահնամակ Ֆիրդուսի, գրվագ Արտաշիր Բարականի, թարգմանեց Հ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1909:

տրոհում որով ալ մարթ է ընթեռնուլ զՇահնամակն ըստ շափական օրինաց (Արուդ)։

...Իսկ լեզվի մասին, արևմտյան աշխարհաբարը, որ մեզ ավելի ընտել է, հիմ առնելով հանդերձ, խտրական անձուկ ոգով մենք մեզ շղթակեցինք հայ լեզվի մյուս երևույթներին, կուղի գրաբար ըսվի նա, կուղե արևելյան կամ Արարատյան¹⁰։

Գրքի առաջաբանին հաջորդում է «Մի քանի խոսք Ֆիրդուսիի վրա» խոնազիրը կրող բաժինը, ուր տրված են կենսագրական հակիրճ տեղեկություններ։

1924 թ., Երևանում հրատարակվող «Նորք» ամսագրի շորրորդ համարում, լույս է տեսնում Գևորգ Ասատուրի թարգմանած «Բեժսուն ու Մանիժա» վեպի նախերգանքը (72 տող)։ Թարգմանիչը պահպանել է $6-5=11$ չափը և տվել հետևյալ ծանոթագրությունը. «...«Շահ-նամեի» բարձր գեղարվեստական էպիգոդ-վեպերից մեկն է «Բեժանի և Մանիժայի» դաստանը. որի նախերգանքի թարգմանությունը տալիս ենք այստեղ»¹¹։

1934 թ. Ֆիրդուսու ծննդյան հազարամյակի առթիվ, Գևորգ Ասատուրի թարգմանությամբ, Երևանում լույս է տեսնում Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբ» վեպը, «Բեժան և Մանիժե» վեպի նախերգանքը և Մահմուդ շահին ուղղված «Երգիծանքը» մեկ ամբողջական գրքով, Մ. Սարյանի նկարազարդմամբ։

Ֆիրդուսու թարգմանություն է կատարել նաև արևելագետ Ռուբեն Աբրահամյանը։ Դա էպոսի «Բահրամ Գուր և Աղաղե» հատվածն է։ Առաջաբանում թարգմանիչը նշում է, որ օգտվել է բնագիր երեք տարբերակից, ինչպես նաև ոոսերեն հրատարակությունից։ «Շահնամեից» այս հատվածը թարգմանելու ժամանակ,—գրում է Ռ. Աբրահամյանը,—փոխանակ ոտանավորի տողերն ընդարձակելու 11-ից մինչև 15—16 վանկ կամ կիսելու և 2 տողը շորս դարձնելու, մենք որոշեցինք հավատարիմ մնալ բնագրին և պահպանել նրա չափը»¹²։

Գրքում կան ծանոթագրություններ և առանձին տեղեկություններ Բահրամ Գուրի մասին։ Վերջում զետեղված է պարսկերեն բնագիրը։

«Շահնամեից» երեք հատված թարգմանել է Հովսեփ Միրզայանը։ Դրանք են՝ «Ռոստամ և Սոհրաբ», «Ռոստամ և Աշքաբուս», «Ռոստամ և էսֆանդեար»։ Տես բնավ մտադրություն չունեի «Շահնամեից» որևէ բան թարգմանել,—գրում է Հ. Միրզայանը,—նույնիսկ ամբողջ ժամանակի ընթացքում, որ Ֆերդուսու տոների խոսքը պտտվում էր Թեհրանում, այդ գաղափարը չէր թվում ինձ հրազորելի։

Որքան շատ էինք մոտենում տոնակատարության, այնքան ավելի ծանրանում էր ինձ վրա իմ բարեկամների ճնշումը, թե ևս որպես պարսկահայ պարտավոր եմ մի ձևով մասնակցել Ֆիրդուսու տոնին, և իմ ամենահարմար և ամենատեսական մասնակցությունը կլինի այն, որ որոշ կտորներ թարգմանեմ «Շահնամե»-ից։ Այնուամենայնիվ ևս շվարած էի, թե «Շահնամե»-ի վաթսուն հազար տուն բանաստեղծությունների այդ օվկիանոսի մեջ որտեղից

¹⁰ Նույն տեղում, էջ IV—V։

¹¹ Գ. Ասատուր, Ֆիրդուսին հայ գրականության մեջ (Ֆիրդուսի, Երևան, 1934, էջ 134)։

¹² Բահրամ Գուր և Աղաղե, պարսկական բնագրից թարգմանեց Ռ. Աբրահամյան, Թեհրան, 1934, էջ 4։

սկսեմ և որտեղ վերջացնեմ այս կարճ ժամանակամիջոցում, որ կարողանամ մի գիրք արտադրել արժանի մեծ բանաստեղծի հաղարամյա տունին:

...Հասավ վճռական րոպեն: Ըս գործի սկսեցի մտածելով, որ կերթամ մինչև ուր որ հասնեմ և կանգ կառնեմ, երբ որ այլևս ժամանակ չունենամ առաջանալու¹³:

Հ. Միրզայանը նախ թարգմանել է «Ռոստամ և էսֆանդեարի» մենամարտի հատվածը, որ կաղմում է 300 տուն, ապա «Ռոստամ և Աշքաբուրի» մենամարտի պատկերը, այնուհետև «Ռոստամի և Սահրաբի» պատմությունը՝ 800 տուն, սակայն դադարեցրելով թույլ չի տվել այս վերջինն ավարտել: «Ես նպատակ ունիմ հետազայում, երբ ժամանակը չի ինի այսքան սուղ, տալ «Ռոստամ և Սահրաբ»-ի ինչպես և «Ռոստամ և էսֆանդեար»-ի պատմությունը ամբողջությամբ, սկզբից մինչև վերջ, առանձին գրքույկով»¹⁴, — գրում է թարգմանիչը:

Քանի որ «Ռոստամ և էսֆանդեարի» պատմությունը 3000 տուն է և թարգմանիչը հնարավորություն չի ունեցել ամբողջությամբ այն վերածել հայերենի, ուստի նրա խնդրանքով հայտնի ֆիրդուսի ազետ Աբդու Վահաբ խան Ալ-Հոսեյնի 'Հայեմ Մղամին շարադրել է «Ռոստամ և էսֆանդեարի» պատմությունը սկզբից մինչև այնտեղ, որտեղից սկսել և ավարտել է իր թարգմանությունը Հ. Միրզայանը: Գրքում ղետեղված է նաև այդ համառոտ պատմությունը՝ հայերեն:

Ֆիրդուսու հաջորդ թարգմանիչը Միհրդատ Թիրյաքյանն է, որը թարգմանել է 25 հատված, այդ թվում՝ «Երգիծանքը», Զոհակին վերաբերող երկու պատմություն, Զալ և Ռուդաբեի հինգ պատմություն, Աֆրասյաբի երկու պատմություն, Ռոստամի և Սահրաբի վեպը, Իսֆենդիարի պատմության երկու հատված, Բահրամ Գուր և Աղադեի երկու հատված, Խոսրով Ա. Անուշիրվան, Նուշիրվանի երկու հատված, Խոսրով Փարվիզի երկու հատված: Ընդարձակ առաջաբանում շարադրված է նաև «Շահնամեի» բովանդակությունը: Գրքում գետեղված է երկու նկար՝ Նյու Յորքի հանրային գրադարանի «Շահնամեի» հավաքածուից, որոնցում պատկերված են Բահրամ Գուրը՝ որսի սլահին և Իսֆենդիարը՝ վիշապ սպանելիս, կա նաև Ֆիրդուսու դամբարանի լուսանկարը Թուսում (Խորասանում):

«Հրապարակելով «Շահնամե»-ն քանի մը հատվածներու սույն թարգմանությունը, ամենախոր հարգանքիս և անխառն հիացումիս տուրքը հատուցած կը համարիմ Իրանի մեծագույն բանաստեղծին՝ անմահ Ֆերդոսիի հանճարին»¹⁵, — առաջաբանում գրում է Մ. Թիրյաքյանը: Նա այդ աշխատանքը կատարել է բանաստեղծի ծննդյան հաղարամյակի առիթով: Ի դեպ, Մ. Թիրյաքյանը մինչ այդ էլ «Շահնամեից» թարգմանել էր առանձին հատվածներ, որոնք տպագրվել էին դանադան պարբերականներում, սակայն դրանք վերստին մշակվել են թարգմանչի կողմից, ենթարկվել փոփոխությունների և հետագայում ամփոփվել մի գրքի մեջ: Այս առթիվ Մ. Թիրյաքյանը գրում է. «...ներկա հրատարակությամբս շեղյալ պետք է նկատել ակնարկված կտորները»¹⁶:

13 Ֆերդուսի, Շահնամե (կտորներ), թարգմանեց Հ. Զ. Միրզայան, Թեհրան, 1934, էջ Ա, Բ:

14 Նույն տեղում, էջ Դ:

15 «Շահնամե» Ֆերդոսի-ի, հատվածներ, պարսկերեն բնագրեն թարգմանեց Մ. Թիրյաքյան, Նյու-Յորք, 1951, էջ 9:

16 Նույն տեղում, էջ 45:

Մ. Թիրյաբյանի թարգմանած հատվածները կազմում են 2082 տող: «Հատվածներու ընտրության մեջ,— գրում է թարգմանիչը,— նկատի առած եմ դրվաժավորաբար նյութերու այլազանությունը փոքր ինչ ճաշակ մը տալու համար ընթերցողին՝ տարբեր պարագաներու և դրություններու ներկայացման ձևին: Պարսկերեն բնագրին հորինվածության կարելի ևղածին չափ հավատարիմ մնալու մտքով ընդունած եմ «Շահնամե»-ին չափը, որ է 11 ոտնյան, 6—5 կամ 4—4—3 տրոհումով: ...Արաբերեն և պարսկերեն բառերն ու հատուկ անունները դասական հայերենի համաձայն տառադարձված են»¹⁷:

Ֆիրդուսուց թարգմանություն է կատարել նաև Բաֆֆին, սակայն ոչ բնագրից, այլ Վ. Օվսենկովի ուսերեն հրատարակությունից: Բաֆֆու թարգմանությունը բաղկացած է երեք մասից՝ «Փոքրիկ բանաստեղծը», «Պատանի բանաստեղծը», «Դրախտայինը» և լույս է տեսել Խիֆլիսում հրատարակվող «Աղբյուր» ամսագրում (1884 թ., № 8—9, 10)¹⁸: Բաֆֆին թարգմանությանը կցել է հետևյալ ծանոթագրությունը. «Թարգմանելով Վ. Օվսենկովի այդ գեղեցիկ աշխատությունը, թույլ տվեցինք մեզ մի բանի աւելորդ փոփոխություն անել, որոնք չէին համապատասխանում այն ավանդությանը, որ կապված է պարսից մեծ բանաստեղծի կենսագրության հետ»¹⁹:

Բաֆֆին թարգմանել է նաև Հայնեի «Ֆիրզովսի» բանաստեղծությունը, որը հետագայում՝ 1934 թ., լույս է տեսել Ս. Տարոնցու թարգմանությամբ: Վերջինս «Շահնամեից» թարգմանել է «Մաղր սուլթան Սահմուդի մասին» հատվածը, որը բաղկացած է 218 տողից և այլ հատվածներ²⁰:

1942 թ. Երևանի պետական համալսարանի հրատարակած «Ստալա աղբյուրները հայերի մասին» մատենաշարի չորրորդ համարը նվիրված է Ֆիրդուսուն և կոչվում է «Պարսկական աղբյուրներ»: Սրա թարգմանությունը կատարել է ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը:

Հր. Աճառյանը իր հայագիտական բազմակողմանի աշխատանքին ղուգահեռ ուսումնասիրել է նաև պարսկերեն լեզուն, պատմությունն ու գրականությունը. ինչպես նաև կրոնական աղանդներն ու սովորությունները և դրանց մասին: զրել արժեքավոր ուսումնասիրություններ²¹: Նա միաժամանակ լուսրգմանել է ինչպես իսլայամի, Սաադիի ստեղծագործություններից, այնպես էլ հատվածներ Ֆիրդուսու «Շահնամեից»: Սակայն, եթե նախորդ թարգմանիչների նպատակն է հղել «Շահնամեն» թարգմանել որպես գեղարվեստական-էպիկական երկ, ապա Հր. Աճառյանը թարգմանությանը կից իր ընդարձակ ծանոթագրություններում ցանկացել է ցույց տալ, թե Ֆիրդուսու մոտ ինչպես են պատկերված հայկական աշխարհն ու հայ ժողովուրդը. բանի որ «Շահնամեում» նկարագրված զեպքերը սերտորեն առնչվում են երկու ժողովուրդների ու նրանց պատմության հետ: Հր. Աճառյանը թարգմանել է 299 տող: Նա օգտվել է ինչպես պարսկերեն, այնպես էլ Mohl-ի և Vullers-ի ֆրանսերեն թարգմանու-

¹⁷ Նույն տեղում, էջ 44:

¹⁸ Գ. Լևոնյան, նշվ. աշխ., էջ 134—135:

¹⁹ Նույն տեղում, էջ 135:

²⁰ Նույն տեղում, էջ 135—136:

²¹ «Զուցակ հայերեն ձեռագրաց Բավրիդի», Վիեննա, 1910, «Գյուրանների ու Քումարի-Ների կրոնը», Երևան, 1925, «Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին», Երևան, 1927, «Պարսկական բենուագրերի յուժման պատմությունը», Երևան, 1951, «Հայերենից փոխառյալ բառեր պարսկերենում», էջմիածին, 1953 և այլն:

թյուններից: Շարադրելով Ֆիրդուսու նկարագրած պատմական շրջանն ու դեպքերը, Հր. Աճառյանը ցույց է տալիս պարսիկ հեղինակի թեքացումներն ու անտեղյակությունը իր իսկ նկարագրած դեպքերի ու դեմքերի վերաբերյալ և, բերելով ժամանակակից հույն պատմիչների վկայությունները, փաստերով հիմնավորում է դրանք: Նա վկայակոչում է նաև VII դ. պատմիչ Սեբեոսին, որը քաջատեղյակ է պարսից, հայոց և հունաց այն ժամանակվա պատմությանը: Հր. Աճառյանը վրդովմունքով է խոսում այն մասին, որ Ֆիրդուսին ամենեվին չի հիշում ներսեսին, իսկ Մուշեղին, որ տալիս է Մուսիլ ձևով, օժտել է բացասական ու ստորացուցիչ գծերով, մի հանգամանք, որը հերքում է Սեբեոսը²²:

Հր. Աճառյանը կատարել է նաև մի շարք լեզվաբանական ստուգաբանություններ, ինչպես նաև՝ պատմական ճշգրտումներ:

Վերջին տարիներին, ի թիվս պարսիկ մի շարք հեղինակների, Սերգեյ Ումառյանի թարգմանությամբ լույս տեսավ «Շահնամեի» «Սիավուշ» հատվածը՝ բաղկացած երկու մասից: «Նախերգանք» բաժնում զետեղված են «Շահնամեի ծագումը», «Ծղկելություն պոետ Դադիդի մասին», «Ինչպես կերտեցի Շահնամեն», «Գովք Աբու Մանսուրին» հատվածները: «Հայ Մուշեղ» բաժնում՝ «Իրանցիները օգնում են հայերին» և «Հայերը օգնում են իրանցիներին» հատվածները: Գիրքն ունի «Թարգմանիչի կողմից» ներածականը, իսկ վերջում՝ ծանոթություններ: Իսկ «Շահնամեն» գրված է 11 վանկանի «մութաբարիբ» չափով, սակայն Ս. Ումառյանը, ի տարբերություն նախորդ թարգմանիչների, թարգմանել է ոչ թե բնագրի, այլ, ինչպես ինքն է ասում, «վիսյական մեծ քերթվածների համար հայերենում թարգմանության մեջ ընդունված 15 վանկանի չափով»²³:

Ս. Ումառյանի թարգմանած երկրորդ գիրքը «Զալ և Ռուդաբեն» է՝ բաղկացած չորս մասից: Գրքի սկզբում տրված է՝ «Նախերգանք Շահնամեի» (9 տարբեր հատվածներ, որոնցից չորսը կրկնություն են նախորդ գրքից), վերջում ունի ծանոթություններ: Հրատարակվել է 1964 թ.՝ Երևանում:

Նույն թարգմանչի երրորդ գիրքը «Լուստամ և Սոհրաբեն» է, որը հրատարակվել է 1967 թ., դարձյալ Երևանում: Սրա «Լիրիկական շեղում» բաժնում տրված է «Ֆիրդուսու գանդատը ծերության մասին», «Ֆիրդուսու ողբը որդու մահվան առթիվ» և «Շախմատի պատմությունը Շահնամեում»:

Ս. Ումառյանի թարգմանած և 1971 թ. հրատարակած «Լիրիկական Արևելք» ժողովածուում ևս հանդիպում ենք առաջին երկու հրատարակություններում տեղ գտած չորս հատվածներին:

Ինչպես տեսանք, հայ իրականության մեջ մեծ հետաքրքրություն է ցուցաբերվել Ֆիրդուսու «Շահնամեի» հանդեպ: Այդ հետաքրքրությամբ են պայմանավորված նրա գործի բազմաթիվ թարգմանությունները, որոնց շնորհիվ հայ ընթերցողը հնարավորություն է ունեցել ծանոթանալու պարսից ժողովրդի հարուստ ու հմայիչ պոեզիայի այդ գլուխգործոցին:

²² «Ֆիրդուսի», քաղեց և թարգմանեց Հր. Աճառյան, Երևան, 1942, էջ 61—62:

²³ Ֆիրդուսի, Սիավուշ, թարգմանեց Ս. Ումառյան, Երևան, 1962, էջ 6:

АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЧИКИ ФИРДОУСИ

АРПИК МИНАСЯН

Резюме

Первым перевод «Шахнаме» на армянский язык принадлежит перу Самуэла Гюльзадянца, который в 1893—1894 гг. издал в г. Шуше несколько частей эпоса. Вслед за ним Фирдоуси переводили и издавали Геворг. Асатур, Арутюн и Мирдат Тирьякяны, Рубен Абрамян, Овсеп Мирзаян, Раффи, С. Таронци и С. Умарян. Отрывки из эпоса перевел также академик Р. Ачарян, сопровождая их подробными комментариями.

Если целью вышеупомянутых переводчиков было представить «Шахнаме» как художественно-эпическое произведение, то Р. Ачарян стремился показать, как у Фирдоуси изображен армянский мир и армянский народ, так как события, о которых повествуется в «Шахнаме», тесно переплетаются с историей двух народов. Р. Ачарян проделал ряд наблюдений и уточнений лингвистического порядка, а также внес поправки, касающиеся некоторых исторических событий того времени.